«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

<<ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքը շարադրել նոր խմբագրությամբ.

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, պահպանության, օգտագործման և կառավարման հարաբերությունները:

Սույն օրենքի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը, բնականոն զարգացման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելումը կամ մեղմացումը, արդյունավետ կառավարումը:

Հոդված 2.Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով և միջազգային պայմանագրերով:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

- **ազգային պարկ՝** էկոհամակարգերի ու դրանց բաղադրիչների պահպանության, վերականգնման և կայուն օգտագործման նպատակներով առանձնացված տարածք, որտեղ բնական երևույթների զարգացման գործընթացներն ընթանում են ինչպես առանց մարդու անմիջական միջամտության, այնպես էլ միջամտությամբ և կարող է օգտագործվել գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի, էկոլոգիապես անվտանգ տնտեսական գործունեության

իրականացման, ինչպես նաև գիտակրթական ու մշակութային միջոցառումների, կանոնակարգված զբոսաշրջության և ռեկրեացիայի կազմակերպման նպատակներով.
- **արգելավայր՝** բուսական, կենդանական աշխարհի առանձին տեսակների և